

**ԻՆՈՎԱՑԻՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՓՈՐՁԻ
ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ**

Հիմնաբառեր – Հետազոտություններ, տեխնոլոգիաներ, մշակումներ, հնովացիոն գործունեություն:

Հետազոտությունների և մշակումների (Հ և Մ) ոլորտը համարվում է տնտեսության արտադրողականության և մրցունակության աճի խթանման հիմնական բաղադրիչը: Երկրների ինովացիոն քաղաքականությունները սովորաբար հիմնված են Հ և Մ զարգացման տարբեր մոտեցումների վրա¹: Մի շարք երկրներում կառավարությունները փորձում են առաջ մղել արդյունաբերական սեկտորի և հետազոտական կազմակերպությունների միջև համագործակցությունը՝ շեշտադրում անելով տեխնոլոգիաների և հետազոտությունների զարգացման, առևտրայնացման, կիրառման և փոխանցման վրա:

«Ինովացիոն գործունեության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի «բ» կետին համապատասխան ՀՀ կառավարությունը հաստատել է Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն ոլորտի զարգացման հետևյալ գերակայությունները.

ա/ ինովացիոն ենթակառուցվածքների ստեղծումն ու զարգացումը,

բ/ էներգիայի այլևտրանքային աղբյուրները,

գ/ բարձր տեխնոլոգիաների մշակումը,

դ/ էկոլոգիապես նախընտրելի տեխնոլոգիաների ներդրումն ու զարգացումը²:

Իսրայելի և Իռլանդիայի հատուկ դեպքերի դիտարկումը բացահայտում է Հ և Մ սեկտորի հաջողության գլխավոր նախապայմանների և առանցքային գործոնների նմանությունների բարձր աստիճանը մեր երկրի հետ և նրանց երկուսի փորձը՝ տեղական յուրահատկությունների հաշվառմամբ, առանց մեծ դժվարությունների կարող է կիրառվել Հայաստանում³:

¹ Schumpeter J. “Business Cycles: A Theoretical, Historical and Statistical Analysis of the Capitalist Process” New York, 1939, vol. I. pg. 100-101

² «Ինովացիոն ոլորտի զարգացման գերակա ուղղությունները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 19.10.2006թ. N 1466 -Ն որոշում

³ «Գլոբալ Էս-Փի-Մի» գործարար և իրավական խորհրդատվական կազմակերպության հենամիջային վերլուծության արդյունքները, www.globalspc.am

Հ և Մ ոլորտի զարգացման գլխավոր նախապայմաններն ու առանցքային գործոնների առկայությունը Իսրայելում, Իռլանդիայում և ՀՀ-ում

Հ և Մ ոլորտի աճի հաջողության հիմնական գործոնները	Իսրայել	Իռլանդիա	Հայաստան
Տաղանդավոր, բարձրորակ աշխատուժ	Ուժեղ զարգացած	Ուժեղ զարգացած	Ուժեղ զարգացած
Ուժեղ Հ և Մ հիմք	Ուժեղ զարգացած	Ուժեղ զարգացած	Ուժեղ զարգացած
Հ և Մ մասնագիտացումներ, քազմազանեցում	Ուժեղ զարգացած	Ուժեղ զարգացած	Լավ է զարգացած
Աջակցություն արտասահմանյան գործընկերների կողմից /սփյուռք/, ԱՌւՆ-ի ռազմավարություն, օֆշորային ուղղորդված բիզնես գործընթաց	Ուժեղ զարգացած	Ուժեղ զարգացած	Ուժեղ զարգացած
Աշխարհի ամենախոշոր ընկերությունների Հ և Մ կենտրոններ, ներդրումներ	Ուժեղ զարգացած	Ուժեղ զարգացած	Թույլ զարգացած
Կրթության և Հ և Մ համար ծախսերի բարձր մակարդակ, հետազոտության ֆինանսավորում	Ուժեղ զարգացած	Ուժեղ զարգացած	Ուժեղ զարգացած
Սկսնակ ընկերություններին օժանդակություն	Ուժեղ զարգացած	Ուժեղ զարգացած	Թույլ զարգացած
Աշխարհագրական մոտ դիրքը և շուկայի ինտեգրումը ԵՄ-ին, միջազգային համագործակցության ուժեղ քաղաքականություն, երկկողմ ազգային համագործակցություն	Ուժեղ զարգացած	Ուժեղ զարգացած	Թույլ զարգացած
Տեխնոլոգիաների փոխանցում, Հ և Մ առևտրայնացում	Ուժեղ զարգացած	Ուժեղ զարգացած	Բացակայում է
Հ և Մ համակարգող մարմին, ներդրումների խթանում	Ուժեղ զարգացած	Ուժեղ զարգացած	Թույլ զարգացած
Ֆինանսական խթաներ, ֆինանսավորում	Ուժեղ զարգացած	Ուժեղ զարգացած	Թույլ զարգացած

Իսրայելն ունի մոտավորապես յոթ միլիոն բնակչություն, սակայն աշխարհում հրատարակված գիտական աշխատանքների մոտ 1 տոկոսը (և մեկ անձին ընկնող գիտական աշխատություն-

ների ամենամեծ թիվը) բաժին է ընկնում նրան: Իսրայելի արդյունաբերության մեջ ընդգրկված ամեն հազար աշխատողից 30-ը մասնակցում է Հ և Մ գործունեությանը և համաձայն ԱՄՆ արտոնագրերի գրասենյակում գրանցված օգտակար արտոնագրերի թվի (1 միլիոն բնակչության հաշվով)՝ Իսրայելը միջինում մեծ յոթնյակի երկրներից առաջ է: Մրցունակության աճի ինդեքսի ինովացիոն բաղադրիչների ցուցանիշներով Իսրայելը իր տարածաշրջանում զբաղեցնում է առաջին տեղը, իսկ աշխարհում՝ վեցերորդը: Համաշխարհային բանկի Գիտելիքահենք տնտեսության ինդեքսի ինովացիոն բաղադրիչների ցուցանիշով այն իր տարածաշրջանում առաջինն է, իսկ աշխարհում տասնյոթերորդը:

Իսրայելի ՀՆԱ 4,8%-ը բաժին է ընկնում քաղաքացիական սեկտորի Հ և Մ-ին՝ համեմատած ԱՄՆ-ի՝ 2.8, Ճապոնիայի՝ 3.1, Ֆինլանդիայի՝ 3.5, և Շվեդիայի՝ 4.3 տոկոսների հետ⁴: Հ և Մ հաջողության մյուս հիմնական գործոններն են լավ մասնագիտացած աշխատուժի առկայությունը, մեկ անձին բաժին ընկնող գիտնականների և ինժեներների մեծ թիվը (ինժեներների թիվը 10 000 մարդու հաշվով Իսրայելում 135 է, ԱՄՆ-ում՝ 70, Ճապոնիայում՝ 65, Նիդեռլանդներում՝ 53)⁵:

Այնպիսի գործոնները, ինչպիսիք են համաշխարհային մեծ սպիտուքը, որն օժանդակել է տեխնոլոգիաների ոլորտում համագործակցությանը և վեճնուրային կապիտալի ֆինանսավորմանը, նախկին Խորհրդային Միությունից եկած մեկ միլիոն որակյալ մասնագետները, ունեցել են նշանակալի ազդեցություն Իսրայելի Հ և Մ զարգացման հաջողություն գործընթացում: Իսրայելում 1984թ. Ընդունված Հ և Մ մասին օրենքը և ՏՏ սեկտորի ճանաչումը որպես տնտեսության հիմնական ճյուղ մեծ դեր են ունեցել Հ և Մ գործունեության զարգացման գործում: Այս օրենքը խթանել է Հ և Մ գործունեությունը՝ պարզեցնելով Հ և Մ ֆինանսավորման գործընթացը, խթանել միջազգային ընկերությունների մուտքը և ապահովել տեխնոլոգիական ինկուբատորների ստեղծման նախադրյալները: Այս հիմնարար օրենքի շնորհիվ Իսրայելի Հ և Մ քաղաքականությունը արդյունավետորեն ապահովել է հիմնարար և կիրառական հետազոտությունների զուգահեռ զարգացումը:

Կիրառական հետազոտական գործունեությունը կորորդիացվում և ֆինանսավորվում է Իսրայելի Արդյունաբերության, առևտրի և աշխատանքի նախարարության Գլխավոր գիտնականների Գրասենյակի (ԳԳԳ) կողմից: Ֆինանսավորվող ծրագրերը պետք է

⁴ http://www.oecdobserver.org/news/fullstory.php/aid/3546/Start-up_nation:_An_innovation_story.html

⁵ www.wto.org/english/tratop_e/tptr_e/s272_sum_e.pdf

լինեն նորարարական, արտահանման ենթակա, ունենան պատշաճ կառավարում, արտադրական և մարքեթինգային ռազմավարություն: Սովորաբար նախագծերը ֆինանսավորվում են Հ և Մ ծախսերի կեսի չափով, որոնք վճարվում են եկամուտ ստանալուն պես: ԳԳԳ-ն առաջարկում է մի շարք աջակցող ծրագրեր՝ նոր, շահութաբեր տեխնոլոգիաների զարգացման նպատակով: Նոր Հ և Մ ծրագրերին աջակցում է նաև YOZMA խումբը՝ սկսնակներին տրամադրելով վեճնչուրային կապիտալի տրամադրում:

Իսրայելը հատկապես ուժեղ է նոր Հ և Մ նախագծերի զարգացման սկզբնական փուլում և նորարարությունները շուկայական ապրանքի վերածելու գործում, ինչին աջակցում է Հ և Մ հիմնադրամը, որն ունի Հ և Մ զարգացման համար մի շարք դրամաշնորհային ծրագրեր: Դրանք համակարգված են հետևյալ սանդղակով՝ Հ և Մ բյուջեի 20-50%-ի չափով ֆինանսավորում և պայմանավորված են ապագա արտադրանքի վաճառքից 3-5 %-ի վճարումներով⁶:

Իռլանդիայի Հ և Մ գործունեության խթանման քաղաքականության զլխավոր ասպեկտը ներքին ներդրումների ռեժիմն է: Հ և Մ գործունեության զարգացման համար այստեղ ձևավորվել է արտաքին ուղղակի ներդրումներին նպաստող լավագույն մթնոլորտ: Այսպիսի ռազմավարության առաջնային նպատակը մեծ թվով օֆշորային ընկերությունների ներգրավումն է գործընթացին և այնուհետև նրանց օգնությամբ Հ և Մ սեկտորի և ընդհանուր տնտեսության զարգացումը: Երկրում մոտ 300 միջազգային ընկերություններ զբաղվում են Հ և Մ գործունեությամբ: Հ և Մ գործունեություն իրականացնող ընկերությունների երկու երրորդը արտասահմանյան ընկերություններ են:

Հարկային խթանների կիրառման շնորհիվ Հ և Մ գործունեության աճ է աճանագրվել և Իռլանդիան դարձել է գրավիչ երկիր արտասահմանյան ընկերությունների համար: Խթանները լրացվում են պետական տարբեր գործակալությունների կողմից տրամադրվող այլ Հ և Մ գրանտային աջակցություններով: Հ և Մ գործունեություն ծավալելու իրավունք ունեցող ընկերությունները տեղակայված հատուկ ազատ գոտիներում, ստանում են հետևյալ հարկային առավելությունները՝ 10% կորպորատիվ հարկից և 10% «Արտադրական դրույք» հարկից, ինչպես նաև ԱԱՀ և մաքսային հարկերից ազատում⁷:

⁶ http://www.financeisrael.mof.gov.il/financeisrael/Docs/En/The_Israeli_Economy_2012.pdf

⁷ <http://www.sciencecouncil.ie/>

Իռլանդիայում Հ և Մ ենթակառուցվածքը խրախուսվում է կառավարական այնպիսի նախաձեռնություններով, ինչպիսիք են «Տեխնոլոգիական կանխատեսում» (technology foresight) և Իռլանդիայի գիտության հիմնադրամները (SFI): 2007-2013թթ. SFI-ը 960 միլիոն դոլար է ծախսել գիտական հետազոտությունների և նոր գիտելիքներ ստեղծող առաջատար կամ նոր տեխնոլոգիաներով զբաղվող հետազոտական թիմերի, ինչպես նաև երկու հզոր ոլորտներում ներգրավված (SS և կենսատեխնոլոգիա) մրցունակ ձեռնարկությունների վրա: Հատկանշական է, որ Հ և Մ զարգացմանը մասնակցող բոլոր կազմակերպությունները վերջինիս տրամադրում են տեղեկատվություն:

Ֆինլանդիայում Հ և Մ ոլորտ ներդրումները պետության և մասնավոր հատվածի կողմից 1990-ականների համեմատ կրկնապատկվել են՝ 2012թ. Հասնելով ՀՆԱ-ի 4,1% ցուցանիշի, այն դեպքում, երբ Եվրոմիության երկրների միջին ցուցանիշը կազմում է ընդամենը 2%⁸: Այսօր Հ և Մ ոլորտ ներդրման մակարդակով ֆինլանդիան զբաղեցնում է 3-րդ տեղն աշխարհում (Շվեդիայից և Իսրայելից հետո):

Տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաները (ՏՀՏ) գիտելիքի տնտեսության հիմքն են և ընդունվում են որպես հասարակության կայուն զարգացումը և տնտեսական աճը երաշխավորող արդյունավետ գործիքներ: Տնտեսության մեջ ՏՀՏ-ի ներթափանցման արդյունավետությունը և արագությունը պայմանավորված է տեղեկատվական ենթակառուցվածքի զարգացման մակարդակով, որն էլ ազդում է ոչ միայն արտադրողների, սպառողների և կառավարության գործունեության վրա, այլև ներգործում է մարդկանց աշխատելու, գիտելիք ձեռք բերելու և հաղորդակցվելու արդյունավետության վրա: ՏՀՏ-ները ամբողջությամբ վերցված մեծ հնարավորություն են բացում գիտելիքահենք տնտեսության զարգացման համար:

Հարավային Կորեայի բնակչության մեկ շնչին բաժին ընկնող արագագործ ցանցային ծառայությունների թիվն ամենամեծն է աշխարհում: 2012թ-ի սկզբին բնակչության 31%-ը կամ տնային տնտեսությունների 94%-ը արագագործ ցանցի բաժանորդներ են: Համաձայն էլ-կառավարության պատրաստվածության ինդեքսի (e-Government Readiness Index)՝ Կորեան 2012թ.- ին զբաղեցնում էր 3-րդ տեղը⁹:

⁸ <http://www.tekes.fi/en/tekes/>

⁹ <http://issues.org/24-1/chung/>

Հենանիշ երկրների հետազոտության արդյունքում և ելնելով Հայաստանի ՏՏ ոլորտի վիճակից կարող ենք հանգել այն եզրակացությանը, որ Հայաստանն առավել արդյունավետ քաղաքականության և պետական ջանքերի առավել լավ համակարգման կարիք ունի՝ ՏՏ ոլորտի զարգացումը խթանելու նպատակով:

АННОТАЦИЯ

Сипан Аветисян, соискатель
АГЭУ

ОСОБЕННОСТИ ЛОКАЛИЗАЦИИ ОПЫТА В СФЕРЕ ИНТЕРНАЦИОНАЛИЗАЦИИ НАУЧНЫХ ИССЛЕДОВАНИЙ И РАЗРАБОТОК ИННОВАЦИОННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

Ключевые слова: Исследовательская и разрабатывающая /ИиР/ деятельность, инновационная деятельность

Исследовательская и разрабатывающая /ИиР/ деятельность считается ключевым элементом в обеспечении экономического роста, производительности и конкурентоспособности. Во многих странах инновационная политика, как правило, основана на различных подходах к развитию И и Р.

В статье мы попытались более эффективно сравнить ситуацию в нашей стране с базовыми странами /в частности Израел и Ирландия /, чтобы получить полную картину.

ANNOTATION

Sipan Avetisyan, researcher
ASUE

FEATURES OF INNOVATIVE OPERATION'S INTERNATIONALIZATION OF RESEARCH AND DEVELOPMENT LOCALIZATION EXPERIENCE SPECTOR

Keywords: research and refinement/ R & R / process, innovation activities

Economic productivity and competitiveness of research and refinement activities is considered a key growth component. Most of the countries' innovation policies are usually based on different approaches to the development of R & R.

In the article we have made an attempt to compare the situation in our country as effectively as we could with the benchmark countries /especially Israel and Ireland / to get a complete picture.